# ԵՐԳ

## ԱՐԵՒԾԱԳԷ ԱՌԱՋ, ՇԱՄՈՒՆԻԻ ՀՈՎԻՏԻՆ ՄԷՋ

Հըմայք մ'ունի՞ս կասեցնելու աստղն առտուան
Իր ընթացքին մէջ զառիվեր, այնքան երկար
Ան կը թուի դադար առնել ահատեսիլ
Եւ լերկ գլխուդ վրայ, իշխանդ դու Մօն Պլան.
Ըստորոտէդ գետերն Արվէ և Արվիրոն
Կը մռնչին յար. այլ՝ կերպարան անշարժուագոյն,
Ի՜նչ լռօրէն կը բարձրանաս մայրիներու
Վեր լուռ ծովէն, չուրջըդ և վերը օդն է մթին,
Շօշափելի և սև զանգուած մ'Եբենոսի.
Ինծի կը թուի որ իբր թէ դուն սեպով մը սուր
Կը ծակես զայն, սակայն դարձեալ երբ կը նայիմ,
Ան խաղաղ տունդ է սեպհական, խորանդ բիւրեղ,
Յաւիտենին քու բնակավայրըդ ընտանի.
Ո՜վ լեռ ահեղ և լռանիստ, նայեցայ վրադ,
Մինչև որ դու թէ և ներկայ դեռ զգայութեանս.
Անհետացար մըտածումէս, և աղօթքի
Մէջ վերացած, պաշտեցի լոկ Աներևոյթն.

Եւ սակայն քաղցր մեղեդիի պէս հոգեթով,
Ա՛յնքան քաղցր որ մեր ունկնդրելն իսկ չենք գիտեր,
Դու նոյն պահուն կը ձուլուէիր խորհուրդիս հետ,
Ա՜յս կեանքիս հետ, և կեանքի գաղտ հրճուանքին,
Մինչև որ իմ լայնցող հոգիս՝ յափըշտակուած,
Եւ փոխանցուած անցնող հզօր տեսիլքին, հոն,
Ինչպէս բնական իր ձևին մէջ, Երկինք հասաւ.
Ո՛ն արթընցի՛ր հոգիս, դու լոկ կրաւորական
Չես պարտիր զովք, և արտօսրներն միայն այս յորդ,
Փառաբանութեան համար, գաղտնի վերացում լոկ.
Արթընցի՛ր ձայն անոյշ երգի, դու ալ իմ սիրտ.
Մորհ հովիտներ և սառ գիծեր, երգի՛ս միացէ՛ք.

Դու գլխաւոր միակ իշխանը հովիտին,
Որ մութին հետ կը պայքարիս գիշերն համբուն,
Եւ կ'ընդունիս այցն աստղերու հոծ բոյլերուն,
Երբ կը մագլին ատոնք երկինք, կամ կը սուզին,
Այգուն՝ ընկերը դու աստղին առաւօտեան,
Դու վարդաթոյր աստղը երկրին, և դու ընկեր
Սուրհանդակը արշալոյսին, հապօ՛ն փառք տուր.
Ո՞վ անարև սիւներդ մըխեց խորը երկրին,
Ո՞վ կերպարանդ օծեց լոյսով վարդակարմիր,
Ո՞վ քեզ ըրաւ ծնող գետերու յաւերժական.

Եւ հինգ վայրի դուք հեղեղներ մոլեգընաց,
Ո՞վ դուրս բերաւ ըզձեզ մահէն և գիշերէն,
Սև, զահավէժ և ապալեր ժայռերէն վար,
Միշտ փըշրուած, բայց միևնոյնը յաւիտեան.
Անխափանելի ձեր կեանքը ո՞վ տուաւ ձեզի

Ձեր ոյժն, հրճուանքն, արագութիւնն ու բարկութիւնն
Որոտն անվերջ ու փրփուրներն յաւերժական.
Ո՞վ հրամայեց (և լռութիւն տիրեց իսկոյն)
Ալիքներուն հոս կարծրանալ և կանգ առնել.
Դուք սառցէժներ, դուք որ լերան կողերէն վար
Սոսկատեսիլ ձորերն ի վար կը սողոսկիք,
Ինծ կը թուի թէ հեղեղներ լսեցին ձայն
Մ'ու կանգ առին յանկարծ իրենց վազքին մէջ խոլ.
Ո՞վ դուք անշարժ հեղեղներ, դուք լուռ ջրվէժներ.
Ո՞վ ձեզ այնպէս փառազարդեց ինչպէս դռներն
Են երկնքի լիալուսնով. ո՞վ հրամայեց
Արեգակին ձեզ հագուեցնել ծիածանով.
Ո՞վ կենդանի ծաղիկներով գեղակազմյալ
Ձեր ոտքերուն տակ դրասանգներ համասփռեց.
Թող հեղեղներ Աստուա՜ծ գոչեն բարձրաղաղակ,
Եւ թող Աստուա՜ծ արձագանգեն սառնադաշտեր,
ԶԱ՛յն երգեցէք դուք ձայնով զուարթ, վտակնե՛ր մարգի,
Եւ հոգեհման ձեր մեղմ ձայնով՝ դո՛ւք մայրինե՛ր,
Եւ, հոն, հեռուն ձիւնակոյտերն ալ ձայն մ'ունին,
Եւ կ'որոտան Աստուա՜ծ իրենց անկումին մէջ.

Դո՛ւք ծաղիկներ, որ կ'երիզէք եղեամէ անվերջ,
Վայրի՜ այծեր, որ կ'ոստնուք շուրջն արծուի բոյնին,
Դո՛ւք արծիւներ, խաղընկերներ լերան բուքին
Դո՛ւք կայծակներ, ահեղ նետեր՝ դուք ամպերուն,
Դո՛ւք տարրերու հրաշալիքներ և նշաններ,
Աստուա՜ծ ըսէք և զովեստով ձեր օրհնաբան
Շուրջի բլուրները լեցուցէք դուք ամէն ժամ.

Դո՜ւ ալեւոր, կատարներովդ երկնայող
Որոնց յաճախ ըստորոտէն ձիւնի չեղջեր
Շողշողալով ջինջ անդորրէն կը մխըրճուին
Խորն ամպերուն որոնք լանջքըդ կը շղարշեն,
Դուն ալ նորէն, վիթխարի լեռ, երբոր հիմա
Քիչ մը առաջ, պաշտումի մէջ խոնարհած գլուխս
Կը վերցնեմ, ստորոտէդ վեր համբառնելով
Արտասուալից իմ աչքերով աղօտանշոյլ,
Կը բարձրանաս առջևս ամպի մ'պէս շողեղէն.
Ո՜հ, բարձրացի՛ր, միշտ բարձրացի՛ր դու յաւիտեան,
Ո՜հ, բարձրացի՛ր երկրէն ինչպէս ամպ մը խունկի.
Բլուրներու մէջ իշխող ոգի՜ արքայական.
Երկրէն երկինք ղրկուած դեսպա՛ն անհաղափառ,
Աղնուապե՛տ, լուռ երկինքին և աստղերուն
Եւ բարձրացող արևակին ըսէ՛, պատմէ՛
Որ երկիրն իր բիւր ձայներով կ'օրհնէ զԱստուած.

Coleridge

Թրգմ. Անգլ. բնագրէն
ԵՂԻԱ ԵՐՈՒԱՆԴ ՄԵԼԷՔԵԱՆ

© National Library of Armenia